ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ • НАШИ ЮБИЛЯРЫ

Է. Բ. ԱՂԱՅԱՆ

(Մենդյան 70-ամյակի առթիվ)

Բոլորիս ակնածանք գիտական ու մանկավարժ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Էդուարդ Աղայանի 70 տարին: Էդ. Աղայանն անցել է գիտական-ստեղծագործական երկար ու բազմաբովանդակ ուղի, որն իր հիմնական գծերով համընկնում է սովետահայ լեզվաբանության վերջին շուրջ կեսդարյա զարգացման ուղուն: Իր գիտական գործունեության հենց սկզբից Էդ. Աղայանը եղել է և այժմ էլ գտնվում է հայ լեզվաբանության առաջամարտիկների շարքում:

Նրա ընդունակությունները և ապագա խոստումնալից գիտնականի տվյալները դրսևորվել են դեռևս իր հայրենի Մեղրիի դպրոցում սովորելու տարիներին և հատկապես Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում ուսանելիս, ուր և նա զբաղվել է մեծանուն հայագետների ու հատկապես ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի ուշադրությունը:

Համալսարանն ավարտելուց ընդամենը երկու տարի անց Աղայանն արդեն բանասիրական գիտությունների թեկնածու էր: Ընդ որում նրա թեկնածուական դիսերտացիան, որն իր մայրենի՝ Մեղրու բարբառի ուսումնասիրությունն էր, փաստական նյութի հավաքման ու դասդասման, պատմական ու համաժամանակյա մոտեցումների զուգորդման և ընդհանրապես հետազոտման եղանակով դարձավ երիտասարդ բարբառագետների հետազոտական աշխատանքի մի ինքնատիպ ուղեցույց: Այնուհետև շատ կարճ ժամանակում իրար հաջորդեցին գիտական նոր աստիճանն ու կոչումները՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, այնուհետև՝ ակադեմիկոս. տիտղոսներ, որոնք նրա գիտական բեղմնավոր գործունեության պաշտոնական հաստատումներն եղան:

Այն են պրոֆ. Էդ. Աղայանի գիտական հետաքրքրության սահմանները՝ ընդհանուր լեզվաբանություն, պատմահամեմատական քննականություն, հայոց լեզվի պատմություն, հայ լեզվաբանության պատմություն, բարբառագիտություն, բառարանագրություն, ժամանակակից հայերեն. արևելյան բանասիրություն և այլն:

Ընդհանուր լեզվաբանության բնագավառում Էդ. Աղայանի հետազոտության հիմնական արդյունքները ամփոփված են նրա «Լեզվաբանության հերձածությունն» ձեռնարկի մեջ, որը հրատարակվում է 1947 թվականից (սկզբնապես «Ընդհանուր լեզվաբանություն» խորագրով): Տասնամյակներ շարունակ այդ ձեռնարկը մեր հանրապետությունում եղել է սովորող սերնդի ընդհանուր լեզվաբանական գիտելիքների հիմնական աղբյուրը. Միանգամայն օրինաչափ է, որ այդ ձեռնարկը թարգմանվել է ռուսերեն: Լեզվաբանական տարբեր պրոբլեմների նվիրված

«Պատմահամեմատական մեթոդը լեզվաբանության մեջ», «Ոճական անցումները լեզվի մեջ», «Լեզուն իբրև համակարգ և իբրև կառուցվածք», «Լեզվի գոյության տարբերակային ձևերը» և այլ ուսումնասիրություններով որոնող գիտնականն իր որոշակի նպաստն է բերել լեզվաբանական հրատապ խնդիրների լուծմանը:

Էդ. Աղայանի հետազոտություններում շատ հաճախ ընդհանուր լեզվաբանությունը և հայ լեզվաբանությունը ինքնատիպ կերպով ձուլվում են միմյանց ի նպաստ թե՛ մեկի և թե՛ մյուսի: Այնպիսի աշխատություն, ինչպիսին է երկհատոր «Հայ լեզվաբանության պատմությունը», նվիրված լինելով հայագիտության մի կարևոր բնագավառի անցած ուղուն, իր մեջ լավագույնս արտացոլում է ինքնակի ընդհանուր լեզվաբանական հայացքները, որոնց տեսանկյունով էլ նա քննում է հայ լեզվաբանության ամբողջ անցած ուղին: Հայ լեզվաբանության մտքի զարգացումը դիտելով որպես մի ամբողջական գործընթաց, Էդ. Աղայանը վերջինս քննում է այն բարդ ու բազմազան կապերի ու հարաբերությունների մեջ, որ հայագիտության այդ ճյուղն ունեցել է աշխարհի ընդհանուր լեզվաբանական մտքի զարգացման հետ: Մյուս կողմից, Էդ. Աղայանն այդ ամենը, մեր անցյալի գործիչներին, նրանց գիտական վաստակը գնահատում է գիտության նմուշ պատմաբանի դիրքերից, որը և նպաստել է անցյալի ժառանգության գիտական ու օբյեկտիվ արժեքավորմանը:

Էդ. Աղայանը զգալի ավանդ ունի հայերենի բառերի ստուգաբանության բնագավառում: Հ. Աճառյանից հետո այս բնագավառում իրենց հետախուզումներն են կատարում հատկապես ակադեմիկոսներ Գ. Ջահուկյանը, Էդ. Աղայանը: Քիչ չեն նաև Աղայանի կատարած բառաքննական հետազոտությունները, որոնցով նա գիտականորեն ճշտել, նշգրտել է մեր ձեռագիր մատենագրության մեջ տեղ գտած բազմաթիվ աղավաղված գրչությունները, առեղծվածային բառեր, բառաձևեր: Գիտնականի այդ ուսումնասիրությունները հիմնականում ամփոփված են նրա «Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ» արժեքավոր գրքում:

Պրոֆ. Էդ. Աղայանը նորարար գիտնական է: Նրա նորարարությունը ոչ միայն հետազոտության արդյունքի, այլև բուն հետազոտության մեթոդի մեջ է: Նա որոշակի քայլեր է կատարել հայերենի փաստական նյութը նորագույն մեթոդներով ուսումնասիրելու բնագավառում: Ըստ որում նա այդ կատարում է թե՛ հայոց լեզվի պատմության («Գրաբարի քերականություն», գիրք Ա) և թե՛ ժամանակակից հայերենի ուսումնասիրության բնագավառում:

Իր գիտական գործունեության հատկապես վերջին երեք տասնամյակներում Էդ. Աղայանը մեծ տեղ է տվել ժամանակակից հայերենի ուսումնասիրությանը, նրա առավել արդիական պրոբլեմներին: Այդ բնագավառին նվիրված նրա ուսումնասիրությունների մեջ առանձնապես մեծ արժեք է ներկայացնում «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» մենագրությունը, որի նշանակությունը դուրս է գալիս աշխատության հասնող վերնագրի սահմաններից: Իր գիտական գործունեության ողջ ընթացքում կանգնած լինելով լեզվաբանական գիտությունների առաջավոր գծում, Էդ. Աղայանն այս դեպքում ևս ձեռնարկել է այնպիսի խնդիրների ուսումնասիրությունը, որոնք պրոբլեմային են և տեղիք են տվել տարակարծությունների: Աշխատության մոտ կեսը ընդհանուր լեզվաբանական, մեթոդական նշանակություն ունեցող հետազոտություն է, որը վերաբերում է ժամանակակից լեզվաբանության խնդիրներին ու հետազոտության մեթոդներին, որոնց լույսի տակ էլ գիտնականը կատարում է ժամանակակից հայերենի ուսումնասիրությունը: Ղեկավարվելով իր իսկ առաջարկած մեթոդներով՝ Էդ. Աղայանը յուրովի գիտական մեկնաբանություն է տալիս՝ ժամանակակից հայերենի հոլովման ու խոնարհման համակարգերին, լուծումներ, որոնց կողքով չի կարող անցնել ոչ մի մասնագետ:

Տեսական բառագիտությունը և հատկապես տերմինագիտությունը հայերենի ամենաքիչ ուսումնասիրված բնագավառն է: Եվ ահա դրան նույնպես արձագանքում է Էդ. Աղայանը իր «Տերմինագիտություն» գրքույկով, որը, չնայած ծավալի սահմանափակությանը, կարևոր տեսական ուսումնասիրություն է և ուշագրավ՝ իր հարցադրումներով ու եզրահանգումներով:

Էդ. Աղայանի աշխատություններից մեկը աչքի է ընկնում ոչ միայն իր ծավալով, այլև գիտական արժեքով և ընդհանուր նշանակությամբ: Դա նրա ստվարածավալ (1615 մեծադիր էջ) «Արդի հայերենի բացատրական բառարան» է: Տասնամյակների տքնաջան աշխատանքի արդյունքի հանդիսացող այս բառարանը ժամանակակից հայերենի ամենածավալուն բացատրական

բառարանն է, որն ընդգրկում է 135000 բառ և 11000 դարձվածաբանական միավոր։ Նյութի այսպիսի ընդգրկման հետ միասին, եթե հաշվի առնենք հեղինակի նուրբ լեզվազգացողությունը, գիտական-բառարանագրական հմտությունը, որի շնորհիվ ապահովվել է բառերի գիտական գնահատություններն ու իմաստների բացահայտումը, պարզ կդառնա, որ էդ Աղայանը միայնակ կատարել է մի մեծ աշխատանք։ Բառարանի «Առաջաբանը» ոչ միայն անհրաժեշտ տեղեկություններ է տալիս բառարանի կառուցվածքի մասին, այլև ներկայացնում է «Արդի հայերենի բառապաշարի ընդհանուր տեսություն», ըստ որում այդ տեսությունը ոչ թե պարզապես հավելում է բառարանին, այլ ներկայացնում է բառարանի ստեղծման գիտական հիմունքները և մառամբ լրացնում այն բացը, որ կա բառարանագրական-բառագիտական աշխատանքի մեջ մեզանում։

Բառապաշարի և առհասարակ բառագիտության բնագավառում էդ. Աղայանն իր աշխատանքները հետագայում ծավալեց «Հայոց լեզու» աշխատության մեջ, որի «Բառագիտություն» բաժինը ժամանակակից հայերենի բառապաշարի, բառային իմաստաբանության և բառակազմության խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունն է։

Ակադ. էդ. Աղայանի վաստակը մեծ է նաև մանկավարժական ու գիտական կադրերի պատրաստման կարևոր գործում։ Շուրջ քառասունհինգ տարի է, ինչ էդ. Աղայանն իր հարուստ գիտելիքներն է հաղորդում ուսանողներին, ասպիրանտներին։ Պրոֆ. Աղայանի բազմաթիվ սաներ, որոնց սենեկման գործում գիտական պահանջկոտությունը նա զուգակցում է մարդկային ջերմ հոգատարության հետ, վաղուց գիտության թեկնածուներ են, դոկտորներ, պրոֆեսորներ։

Միանգամայն օրինաչափ է, որ պրոֆ. էդ. Աղայանը միշտ կապված է եղել հայագիտության երկու խոշոր կենտրոնների՝ Երևանի պետական համալսարանի և գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի հետ ոչ միայն իր ստեղծագործական աշխատանքով, այլև պաշտոնավարությամբ։ Որպես Երևանի համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր և լեզվի ինստիտուտի դիրեկտորի գիտական գծով տեղակալ, նա ժամանակին զգալի կազմակերպչական աշխատանք է կատարել հայագիտության և մասնավորապես հայերենագիտության զարգացման բնագավառում։ Այժմ էլ նա հմտությամբ է ղեկավարում համալսարանի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժինը, հայագիտական կենտրոնը, լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժինը։

Մեր կուսակցությունն ու կառավարությունը բարձր են գնահատել էդ. Աղայանին, նրա ծառայությունները։ Պիտանական 70-ամյակը կառավարության կողմից նշվեց բարձր պարգևով։ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Նա ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ է։

Ակադ. էդ. Աղայանը այժմ էլ շարունակում է ստեղծագործական իր ուրոնումները, հետախուզումները, ունի իր ծրագրերը։ Անվանի գիտնականին ցանկանք բարգավաճություն և ստեղծագործական նոր ձեռնումներ։

Բանասիր. գիտ. դոկտոր Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ